

## ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

*Հեղինակ՝ Արամ Գաբրիելյան*  
Ֆիզ.-մաթ. գիտությունների թեկնածու

*«Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ*  
ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ ԱԽ 3

*Սույն հետազոտությունը իրականացվել է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում:*

*Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:  
Սույն հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակի կարծիքն է և  
կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կլիմայի փոփոխության ոլորտում, Փարիզյան համաձայնագրով նախատեսված զարգացող երկրների, դրանց թվում նաև Հայաստանի պարտավորությունները (ներդրումները) մեկնարկում են 2020թ.-ից: Դրանց մեծ մասի կատարումը տեղի է ունենալու տեղերում, առաջին հերթին՝ համայնքներում: Պետությունը պարտավոր է ստեղծել Կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության միջոցառումների խթանման պայմաններ, այդ թվում ներքին ու արտաքին ֆինանսական ռեսուրսների ապահովում: Ըստ Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ (այսուհետ՝ ՀԸԳՀ), որը կլիմայի փոփոխության հարցում համագործակցության մասով հենվում է նաև Փարիզյան համաձայնագրի վրա, Եվրամիությունը, որպես կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի 2-րդ հավելվածում ընդգրկված «Տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություն», կրում է մի շարք պարտավորություններ, ներառյալ ֆինանսական պարտավորություն զարգացող երկրների նկատմամբ՝ աջակցելու վերջիններիս Կլիմայի փոփոխության հետ կապված միջոցառումների կատարման համար: Հայաստանի ստանձնած հանձնառությունները, որոնք սահմանված են «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներում» (INDC), ներառում են ֆինանսական մեխանիզմ, որը կրում է քաղաքացիական բնույթ և կարող է հիմք հանդիսանալ քաղաքացիական հարթակում Եվրամիության հետ համագործակցության համար: Դա, առաջին հերթին, «Էկոհամակարգային մոտեցման» ներդրումն է սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում ու նախագծերում, որում, որպես այդ մոտեցման կենսագործման մեխանիզմ, ծառայում է էկոհամակարգային ծառայությունների ֆինանսական գործիքը:

Այդ գործիքը կիրառվում է Եվրամիության մի շարք պետություններում և կարող է ներդրվել Հայաստանում:

Մեր երկրում ձևավորվել է իրավիճակ, երբ համայնքների տնտեսական և սոցիալական զարգացումը գրեթե ամբողջությամբ կախված է պետության կողմից սուբսիդավորումներից, դոտացիաներից և սուբվենցիաներից: Այս փաստը, իհարկե, չի նպաստում հասարակության ինքնակառավարման զարգացմանը և ինքնաբավությանը: Ավելին, նման պայմանները խոչընդոտում են հասարակական նախաձեռնությունների, մասնավորապես՝ ներդրումային նախագծերի իրականացմանը:

Անհրաժեշտ է փոխել իրավիճակը՝ համայնքների և բնակավայրերի բնակչությանը ներգրավելով սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների վերհանմանն ու լուծմանը՝ ներդնելով ինքնակառավարման նորարարական մեխանիզմ:

Սույն նախագծով վերլուծություն է կատարվել Հայաստանում կլիմայի փոփոխության հիմնախնդրի լուծմանը նպատակաուղղված մի քանի նախագծերի ու ծրագրերի նկատմամբ, ինչպես նաև պետության քաղաքականության, քաղաքացիական բնակչության ներգրավվածության ու մասնակցության վերաբերյալ: Վեր են հանվել այն հիմնարար խնդիրները, որոնց լուծումը անհրաժեշտ հիմքեր կստեղծի միակ շահառու՝ երկրի բնակիչների մոտիվացված մասնակցության համար: Ուսումնասիրության արդյունքում տրվում են առաջարկություններ, որոնք միտված են ստեղծելու ինստիտուցիոնալ հիմքեր Հայաստանի գյուղական համայնքներում Հայաստանի «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումների» (INDC) ֆինանսական գործիքների կիրառմամբ, ինչպես նաև ՀԸԳՀ-ով նախատեսված օժանդակությամբ նպաստել Փարիզյան համաձայնագրի կատարմանը նպատակաուղղված կարողությունների ամրապնդմանն ու զարգացմանը, որոնք միաժամանակ կապահովեն Եվրամիության գործիքակազմին մոտարկմանը:

Ծրագրի թիրախային խմբերն են Հայաստանի գյուղական ու քաղաքային բնակիչները, որոնք հանդիսանում են միակ շահառուները:

## **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

«Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան (այսուհետ՝ ԿՓՇԿ) հիմնական միջազգային բազմակողմանի պայմանագիրն է, որով միջազգայնորեն կարգավորվում են կլիմայի փոփոխության հետ կախված հիմնախնդիրները: Այն ստորագրվեց 1992թ.-ին Ռիո դե Ժանեյրոյում կայացած Համաշխարհային գագաթնաժողովում: Քանի որ կոնվենցիայի մշակման շուրջ բանակցություններն ընթացել են ԽՍՀՄ գոյության ժամանակ, Հայաստանը չի մասնակցել կոնվենցիայի մշակմանը ու, փաստացի, մասնակցությունը մեկնարկել է 1992թ.-ին Ռիո դե Ժանեյրոյում կայացած գագաթնաժողովում ՀՀ նախագահի կողմից այն ստորագրելու պահից:

**ԿՓՇԿ-ի ներքո 1992թ.-ից որոշ նախաձեռնություններ, որոնք օգտակար են իրազեկման ու փորձի ձեռք բերման առումով**

Կոնվենցիան ստորագրելուց հետո ՀՀ գերագույն խորհուրդը վավերացրեց այն 1993թ.-ի մայիսին (դեռ կոնվենցիան ուժի մեջ չէր մտել): 1994-ին կոնվենցիան մտավ ուժի մեջ ու նրան անդամակցող Կողմ երկրների 1-ն համաժողովին (Բեռլին) ընդունվեց այսպես կոչված «Բեռլինյան հանձնագիրը» (մանդատը), եւ 2 տարվա բանակցությունների ընթացքում մշակվեց ու 1997թ.-ին Ճապոնական Կիոտո քաղաքում կայացած ԿՓՇԿ 3-րդ համաժողովում ընդունվեց Կիոտոյի արձանագրությունը: Այս ընթացքում, երբ

Հայաստանը դեռ նոր էր ձեռք բերել ինքնիշխանություն, առաջ եկան խնդիրներ, որոնք բնորոշ էին նաև ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով առաջացած մյուս պետություններին: Դա մի կողմից անփորձությունն էր, մյուս կողմից՝ սոցիալիզմից հետո նոր, դեռևս անհասկանալի կացութաձևի անցնելը, որի փորձը աշխարհում չկար:

ԿՓՇԿ-ում այդպիսի պետությունների մի մասին (Եվրոպական նախկին սոցիալիստական երկրներին, մերձբալթյան 3 պետություններին, Ռուսաստանի Դաշնությանը, Ուկրաինային ու Բելառուսին) տրվել էր «անցումային տնտեսությամբ երկրի» կարգավիճակ, որոնք միաժամանակ ընդգրկված էին Կոնվենցիայի «Հավելված 1»-ի զարգացած երկրների ցանկում: Մնացած երկրները, որոնք համարվում էին «զարգացող», հիմնականում խմբավորված էին այսպես կոչված «77 ու Չինաստան» խմբում (թվով մոտ 130 պետություն) ու հանդես էին գալիս նաև որպես «Հավելված 1-ում չընդգրկված» երկրներ:

Այսպիսով, նախկին ԽՍՀՄ-ի մյուս 9 հանրապետությունների և Ալբանիայի կարգավիճակները «ձեռք բերեցին» որոշ անորոշություն, որը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ այդ նոր երկրները հաճախ ըմբռնվում էին որպես նախկին սոցիալիստական, այսինքն, «անցումային տնտեսությամբ երկրներ», իսկ դրանց մի մասը (Ղազախստան, Վրաստան) չէին ցանկանում (հանդուրժում) կոչվել «զարգացող»: Խնդրի կարևորությունը կայանում էր նրանում, որ կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմից (Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից-ԳԷՀ-GEF) կարող էին օգտվել «Հավելված 1-ում չընդգրկված» զարգացող երկրները, իսկ միջկառավարական բանակցությունների ժամանակ հաճախ ակնարկվում էր, որ վերը նշած 10 երկրները չեն համապատասխանում այդ կարգավիճակին:

Հարցը կարգավորելու նպատակով այդ երկրներից երեքի պատվիրակությունները (այդ թվում՝ Հայաստանի) նախաձեռնեցին «իրավական պարզաբանումների» գործընթաց այդ 10 երկրների կարգավիճակի շուրջ, որը տևեց 2 տարի և կայացվեց որոշում, որ նշված 10 երկրները կարող են օգտվել այն բոլոր ֆինանսական գործիքներից, որոնք նախատեսված են զարգացող երկրների համար: «Իրավական պարզաբանումների» ընթացքում հայտնի դարձավ զարմանալի փաստ, որ «զարգացած» կամ «զարգացող երկիր» եզրույթը, որը լայնորեն օգտագործվում է ԿՓՇԿ-ում և այլ միջազգային փաստաթղթերում չունի իրավական հստակ սահմանում ու ծագում: Նկատի ունենալով իրավական պարզաբանումների արդյունքը, նշված 10 երկրների պատվիրակությունները ստեղծեցին «Կենտրոնական Ասիա, Կովկաս, Ալբանիա, Մոլդովա» (CACAM) ոչ պաշտոնական բանակցային խումբ, որի նպատակն էր խմբակային կարգով բանակցությունների ընթացքում պաշտպանել բոլոր 10 երկրների միատեսակ շահերը:

Շահերի միատեսակությունը հիմնականում բխում էր նրանից, որ այդ բոլոր երկրներում ջերմոցային գազերի արտանետումները կտրուկ նվազել էին, ինչը տեղի էր ունեցել տնտեսական խորը անկման հետևանքով, և որ տնտեսության վերականգնումն ու զարգացումը չէր կարող տեղի ունենալ առանց արտանետումների աճի: Հատկանշական էր դարձել նաև այն հանգամանքը, որ սոցիալիզմից հրաժարվելու հետևանքով փոխվում էր նաև սեփականության ձևը: Հողի ու արդյունաբերական ձեռնարկությունների համաժողովրդական (սոցիալիստական) սեփականությունը մասնավորեցվում էր, որը հակաիրավական օրենսդրությամբ ուղեկցվող ընթացակարգով հայտնվում էր սահմանափակ անձերի ձեռքում, որոնք, համագործակցելով պետական այրերի հետ, ձևավորում էին օլիգարխիկ համակարգը:

### **«Դեպի ծով ելք չունեցող լեռնային երկրների» բանակցային խմբակցության ստեղծում**

ԿՓՇԿ-ն իր 4-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանում է այն 9 չափանիշները, որոնցով բնութագրվում է կլիմայի փոփոխության հետևանքով երկրի բարձր խոցելիությունը: Կոնվենցիայով նախատեսվում է առանձնահատուկ վերաբերմունք այդպիսի երկրների կարիքների նկատմամբ, մասնավորապես, ֆինանսավորման, ապահովագրական ու տեխնոլոգիաների տրամադրման գործընթացներում: Նշված չափանիշներից 3-ը միանգամայն համապատասխանում են Հայաստանի տարածքին (կլիմայի չորայնություն, խոցելի լեռնային էկոհամակարգեր, դեպի ծով ելք չունեցող): Հիմք ընդունելով այդ դրույթը՝ Հայաստանի նախաձեռնությամբ կոնվենցիայի բանակցային միջավայրում ստեղծվեց նաև «Դեպի ծով ելք չունեցող լեռնային երկրների» բանակցային խումբ, որը կոչված էր նպաստելու նման երկրների կարիքների ներկայացմանն ու բավարարմանը:

2013թ. հունիսի 23-ին Հայաստանը միացավ «Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին» Կոնվենցիային, որին ՀՀ-ի անդամակցությունը տնտեսական և քաղաքական հատուկ կարևորություն ունի, քանի որ հնարավորություն է ընձեռում միջազգային իրավունքի հիման վրա պաշտպանելու երկրի շահերը երրորդ երկրների տարածքով ազատ (անվճար) տարանցման համար, ինչը նպաստում է նաև «կլիմայական» տեխնոլոգիաների փոխանցմանը համագործակցող երկրներից:

Դժբախտաբար, տրանսպորտային շրջափակման մեջ գտնվող Հայաստանի կառավարությունը առայժմ չի օգտվում այդ բարենպաստ պայմանից՝ կլիմայի փոփոխության մեղմմանը ու հարմարվողականությանը նպատակաուղղված «վավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներմուծման համար:

## **Կիոտոյի արձանագրություն (1997թ.)**

*«Երրորդ ուղի».* գաղափարն ու դրա հիմնավորումը (ի տարբերություն Ղազախստանի «2-րդ ուղու»)

Ինչպես հայտնի է, Կիոտոյի արձանագրությունը սահմանում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման քանակական (թվային արտահայտությամբ) պարտավորություններ միայն զարգացած երկրների համար: Այդ երկրների ցանկը ամփոփված է Կիոտոյի արձանագրության «Հավելված «Բ» -ում (Հայաստանը, բնական է, այդ ցանկում չի ընդգրկված):

Կիոտոյի արձանագրությամբ զարգացած երկրներին այդ պարտավորությունների կատարմանը օժանդակելու համար սահմանված են այսպես կոչված «ճկունության մեխանիզմներ»: Դրանք երեքն են 1.«Համատեղ իրականացման», 2.«Արտանետումների քվոտաների առևտուր» և 3. «Մաքուր զարգացման մեխանիզմ» (ՄՁՄ-CDM):

Առաջին երկու մեխանիզմներում կարող են մասնակցել միայն «Հավելված «Բ» -ում ընդգրկված զարգացած երկրները, ՄՁՄ-ում զարգացած երկրի հետ կարող է մասնակցել զարգացող երկիրը:

Հետաքրքիր հնարավորություն է ընձեռում «Արտանետումների քվոտաների առևտրի» մեխանիզմը անցումային տնտեսությամբ զարգացած երկրների համար:

Քանի որ իրենց թույլ է տրված տնտեսությունը վերականգնելու ընթացքում մեծացնել ջերմոցային գազերի արտանետումները, ապա, քանի դեռ այդ աճը տեղի չի ունեցել, այդ երկրները կարող են վաճառել իրենց քվոտաները ածխածնային շուկայում, որը որպես նորարարական շուկայական միջավայր ձևավորում են զարգացած երկրները՝ արտանետման քվոտաները (բաժնեմասերը) միմյանց վաճառելու համար (օրինակ, Ուկրաինան վաճառեց Ճապոնիային ածխաթթու գազի համարժեք 30 միլիոն տոննա քվոտա 370 միլիոն ԱՄՆ դոլարով):

Ենթարկվելով նման գայթակղությանը, Ղազախստանը հայտարարեց, որ իր՝ զարգացող երկրի կարգավիճակը փոխում է զարգացածի (այդպիսի հնարավորություն նախատեսված է Կիոտոյի արձանագրությամբ) ու ձեռնարկեց քայլեր այդ ուղղությամբ, որը ոչ պաշտոնական լեքսիկոնով անվանվեց «Երկրորդ ուղի»:

CACAM խմբակցության մի քանի երկիր, այդ թվում և Հայաստանը ևս փորձեցին այդ շուկայում մասնակցել, սակայն որոշակի զգուշությամբ՝ հետևյալ սկզբունքով.

Երկիրը ստանձնում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման միջազգայնորեն համաձայնեցրած քանակական պարտավորություն, սակայն չի փոխում իր զարգացող երկրի կարգավիճակը, իսկ ստացված գումարները

օգտագործում է բացառապես «կանաչ ներդրումների սխեմայով» և որպես զարգացող երկիր կարող է մասնակցել նաև ՄՁՄ-ում, որպես ընդունող երկիր:

Այդ նախաձեռնությունը ստացավ «3-րդ ուղի» ոչ պաշտոնական անվանումը և դարձավ միջազգային քննարկումների թեմա:

Քննարկումները տևեցին գրեթե 3 տարի:

Սակայն «77 ու Չինաստան» խմբակցության անհամաձայնության հետևանքով «3-րդ ուղին» չընդունվեց: Դրա հիմնական պատճառն այն էր, որ եթե այդ երկրների ազատ քվոտաները հայտնվեին ածխածնային շուկայում, ապա ջերմոցային գազերի կրճատումների գինը կընկներ, որից կարող էին տուժել ՄՁՄ-ով նախագծեր իրականացնող զարգացող երկրները: Այսպիսով, Հայաստանը շարունակեց իր մասնակցությունը Կիոտոյի արձանագրության միայն ՄՁՄ-ով:

Եթե վերը նշված «երրորդ ուղու» սխեման հաջողվեր, ապա հնարավորություն էր ընձեռվելու հիմնել շրջանառու ներդրումային հիմնադրամ ու կոնվենցիայով սահմանված «կանաչ ներդրումների սխեմայով» իրականացնել, ամենահամեմատ հաշվարկներով, 100-150 մլն.դոլարի ներդրումային նախագծեր:

Ղազախստանի «Երկրորդ ուղի»-ն էլ հաջողությամբ չպսակվեց, քանի որ այն պահանջում էր ուղղում մտցնել Կիոտոյի արձանագրության հավելված «Բ» ում: Այդ ուղղումը պետք է վավերացնեին մոտ 140 երկիր, որը գործնականում անհնար էր: Այսպիսով, Ղազախստանը չստացավ ցանկացածը ու միաժամանակ զրկվեց ՄՁՄ-ում մասնակցելու հնարավորությունից:

Բելառուսի բախտն էլ չբերեց, սակայն այս դեպքում պատճառն այն էր, որ այդ երկիրը ուշացրել էր վավերացնելու ԿՓՇԿ-ն ու Կիոտոյի արձանագրության ընդունման ժամանակ չէր ընդգրկվել քանակական պարտավորություն կրող երկրների «Հավելված «Բ» ցանկում:

Փաստորեն, ուշանալու հետևանքով, Բելառուսը ձախողեց իր մասնակցությունը Կիոտոյի արձանագրությունում ու չկարողացավ Ուկրաինայի օրինակով վաճառել իր «ավելցուկ» քվոտաները («горячий воздух»- "hot air") ածխածնային շուկայում ու չկարողացավ «լավագույն հասանելի տեխնոլոգիաներ» ներմուծել երկիր «համատեղ իրականացման» մեխանիզմով:

Փարիզյան համաձայնագիրը ընձեռնում է միջազգային համագործակցության լայն հնարավորություններ, մասնավորապես նրա 6-րդ հոդվածի շրջանակում, ու չափազանց կարևոր է լավ հասկանալ համագործակցության ընթացակարգերն ու հնարավորությունները, լինել աչալուրջ, նորարար ու նախաձեռնող: Այդ նախաձեռնությունները պետք է գեներացնել ոչ պետական՝ քաղաքացիական շերտերում, որոնք միակ շահառուներն են ու պատահական չէ, որ Փարիզյան համաձայնագրով նախատեսված է «ոչ պետական սուբյեկտների հարթակի» ստեղծումն ու գործունեության ծավալումը, ու արդեն իսկ նկատվում է միջազգային կլիմայական ֆինանսավորման հոսքերի աստիճանաբար ուղղումը դեպի այդ սուբյեկտները (օրինակ, Եվրամիության քաղաքապետների դաշնագիրը): Կլիմայի փոփոխության հիմնախնդրի լուծման թե՛ հարմարվողականության, թե՛ մեղմման միջոցառումների գերակշռող մասը պետք է կատարվեն այդ սուբյեկտներում՝ տեղական համայնքներում (բնակավայրերում), ուստի դրանց կարողությունների զարգացումն ու ամրապնդումը, այդ թվում ֆինանսական, դառնում են հրամայական: Այստեղից հասկանալի է, որ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի դերը դառնում է առանցքային: Ու դա վերաբերում է ոչ միայն 3-րդ խմբի գործունեության շրջանակներին, այլ՝ բոլոր խմբերի: Ավելին, նպատակահարմար է այդ գործընթացին ներգրավել նաև գործարար հատվածն ու արհեստակցական միությունները ու մասնագիտական խմբերը (համքարությունները): Այդ գործընթացում նպատակահարմար է օգտվել ՀԸԳՀ-ի ընձեռած հնարավորություններից:

Ըստ ՀԸԳՀ-ի՝ Հայաստանը պարտավորություն է վերցրել Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ու Փարիզյան համաձայնագրի շրջանակում մոտարկել իր դիրքորոշումները ԵՄ-ի դիրքորոշմանը: Մասնավորապես, ըստ ՀԸԳՀ-ի՝ Հայաստանը պետք է ուսումնասիրի Կիոտոյի արձանագրության ներքո ԵՄ-ում գործող «արտանետումների առևտրի» ու «համատեղ իրականացման» մեխանիզմների կարգերը, որպեսզի Փարիզյան համաձայնագրի շրջանակում դրանց կատարելագործված տարբերակների ներքո կարողանա համագործակցել ԵՄ երկրների հետ: Կարևոր է ՀԸԳՀ-ի շրջանակում ԵՄ-ի հետ «կարողությունների զարգացման ու ամրապնդման» համագործակցության դրույթների օգտագործմամբ բարձրացնել երկրի կարողությունները հատկապես տեղական քաղաքացիական ու գործարար շրջանակներում: Մեր պատկերացմամբ՝ անհրաժեշտ է ձևավորել համապատասխան ինստիտուցիոնալ «հանրային-մասնավոր համագործակցության» շրջանակ: Դրա նպատակահարմարությունը ևս ընդգծված է Հայաստանի INDC-ում: Կարծում ենք, այդ նպատակով նպատակահարմար է հենվել ԱլԳ ՔՉՖ- ազգային հարթակներին անդամակցող 3 կողմերի՝ ՀԿ-ների, գործարար հատվածից՝



Առևտրաարդյունաբերական պալատի ու Գործարարների միության, ինչպես նաև արհմիությունների ու մասնագիտական համայնքի (համքարությունների) վրա:

**Կիոտոյի արձանագրության ՄՁՄ որոշ նախագծերի իրականացման համառոտ վերլուծություն:**

Նման վերլուծությունը կարելու է, նկատի ունենալով, որ Փարիզյան համաձայնագրի ներքո գործողություններում կկիրառվեն Կիոտոյի արձանագրության ճկունության մեխանիզմների նմանությամբ ձևավորված, սակայն կատարելագործված մեխանիզմներ:

Դրանց ներդրումը կխթանի մասնագիտական կարողությունների ամրապնդումը համայնքներում (գյուղերում ու փոքր քաղաքներում), այդ թվում, համապատասխան նախագծերի նախապատրաստման ու դրանց ֆինանսավորումը ապահովելու համար:

Վերլուծության նպատակով ուսումնասիրվել են Կիոտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով նախաձեռնած ստորև 3 նախագծերը:

ա/ «Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոններից կենսագազի օգտահանման ու էլեկտրաէներգիայի արտադրության» ՄՁՄ նախագիծը ընթացքի մեջ է, սակայն 2021թ.-ին ավարտվելու է:

Երևանի քաղաքապետարանը ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նպատակահարմար չգտան ծրագիրն իրականացնել ամբողջ ծավալով: Երևանի քաղաքապետարանը նախագծի համար տրամադրեց միայն 7 հա տարածք ու պայմանով, որ կենսագազը չօգտագործվի էլեկտրաէներգիա արտադրելու համար, այլ պարզապես այրվի ջահում:

Նախագծով փորձ կատարվեց նորարարական ֆինանսական մեխանիզմ ձևավորել: Սակայն այս հարցում ևս Երևանի քաղաքապետարանը ստեղծեց խոչընդոտներ, ու այդ նախաձեռնությունը ևս չիրականացվեց:

բ/«Լուսակերտի կենսագազի գործարան» ՄՁՄ նախագիծը, թեև կառուցվեց ՄՁՄ-ի ներքո, շահագործվեց, արտադրվեց էլեկտրաէներգիա ու ջերմային էներգիա, սակայն ջերմոցային գազերի արտանետումների կրճատումների հավաստագրում (սերտիֆիկացում) չիրականացվեց, քանի որ շահագործվում էր հաստատված ՄՁՄ նախագծի մոնիտորինգի պլանից շեղումներով: Այնուհետև արտադրության ծավալները զգալիորեն նվազեցին հումքի (թոշնաղբի) պակասելու պատճառով, և գործարանը դադարեց գործել: Սակայն ՄՁՄ նախագծի փորձը ցույց տվեց, որ այդ տեխնոլոգիան հեռանկար ունի, որպես «լավագույն հասանելի տեխնոլոգիա», եթե

«հասանելիությունը» ապահովվի բնապահպանական պահանջներով սահմանված տնտեսական խթաններով:

Լուսակերտի կենսագազի գործարանի ՄՁՄ նախագծի փորձի հիման վրա պետք է դիտարկել կլիմայային սխեմայով նման գործարանների ստեղծման հեռանկարը Հայաստանի գյուղական համայնքներում՝ Հայաստանի INDC-ի ֆինանսական սխեմայով:

զ/ ՄՁՄ միջազգային գործադիր մարմնի կողմից հաստատված **փոքր ՀԷԿ-երի 3 ՄՁՄ նախագծերին** հետագա ընթացք չտրվեց: Նախաձեռնողները փորձեցին ՄՁՄ-ի կիրառմամբ ստանալ լրացուցիչ արտոնություններ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման դիմաց գեներացված «արտանետումների սերտիֆիկացված կրճատումների» (ԱՄԿ) հաշվին: Սակայն այդ իրենց չհաջողվեց: ՓՀԷԿ-երի սեփականատերերը հրաժարվեցին ՄՁՄ-ից ու շարունակեցին կառուցել ու գործարկել դրանք սովորական կարգով, մեծ վնաս հասցնելով ջրային ու մերձջրային էկոհամակարգերին:

Հետագա ընթացք չստացան նաև մի շարք այլ ՄՁՄ նախագծեր:

Մեր համոզմամբ, այդ չիրականացված նախագծերի որոշ մասը կարող են իրականացվել Հայաստանի INDC-ի ֆինանսական մեխանիզմի՝ կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի սխեմայով:

## **Փարիզյան համաձայնագիր**

### *Փարիզյան համաձայնագրին ընդառաջ*

Հաշվի առնելով սույն աշխատության նպատակը, կարիք չկա առանձին մեկնաբանություններ տալ Փարիզյան համաձայնագրի մասին, ուստի համառոտ կանդրադառնանք Հայաստանի ստանձնած պարտավորություններին, որոնք սահմանվեցին Փարիզյան համաձայնագիրն ընդունելուց առաջ:

Միջպետական համաձայնությամբ՝ մինչ Փարիզում կայացած ԿՓՇԿ-ի կողմ երկրների 21-րդ համաժողովի մեկնարկը պետությունները ներկայացրեցին իրենց հանձնառությունները, որոնք կոչվում են «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներ» (Intended Nationally Determined Contributions-INDC)»:

Հայաստանի Հանրապետությունը ևս ներկայացրեց Հայաստանի INDC-ն, որպես ՀՀ պաշտոնական հանձնառություններ, որը հաստատվել է Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N42 որոշմամբ ու ներկայացվել ԿՓՇԿ կողմ երկրներին:

Այս փաստաթուղթը ներառում է կլիմայի փոփոխության մեղմացման պարտավորություն՝ չգերազանցել ընդհանուր 633 միլիոն տոննա CO2 համարժեք արտանետումները 2015-2050 թվականների ժամանակահատվածում (35 տարի): Այս հանձնառությունը սահմանվում է «վերից վար» մոտեցմամբ, որը հիմնված է ա) գլոբալ միջին ջերմաստիճանը 2 աստիճանից ցածր պահելու պայմանի վրա, բ) մարդկանց հավասարությանը կլիմայական ռեսուրսներից օգտվելու տեսակետից, գ) ապագա սերունդների իրավունքը՝ կլիմայական ռեսուրսներն օգտագործելու համար: Հայաստանը նաև պարտավորվում է հասնել արտանետումների «գրոյական» հաշվեկշռի մինչև 2050 թվականը, երբ արտանետումները չեն գերազանցի Երկրի էկոհամակարգի կողմից ածխաթթու գազի կլանման և ածխածնի տեսքով դրա կուտակման քանակը, ինչը, ըստ IPCC- ի, տարեկան մեկ շնչի հաշվով կազմում է մոտ 2 տոննա ածխաթթու գազի համարժեք: INDC- ի ներքո ստանձնած պարտավորությունների իրականացումը (ներառյալ մեղմացման և հարմարվողականության միջոցառումները) մեծապես կախված է նոր տեխնոլոգիաների ներդրումից, տեղական կարողությունների ուժեղացումից, թափանցիկ «չափման հաշվետվայնության և հավաստագրման» (ՉՀՀ) համակարգի (Measurement Reporting Verification-MRV) ներդրումից և, ամենակարևորը, իրականացման կայուն ֆինանսական մեխանիզմի ստեղծումից:

Ստորև ներկայացնում ենք Հայաստանի INDC-ով սահմանված ֆինանսական մեխանիզմը, որը նախատեսված է երկրում կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողական նախագծերի իրականացման համար: Այդ ֆինանսական մեխանիզմի վերաբերյալ INDC-ից քաղվածքը կցվում է (հավելված):

Այդ մեխանիզմի ներքին բաղադրիչը ձևավորվելու է կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևաչափով, որը հաստատուն հիմունքներով համալրվում է բնավճարների միջոցներից, էկոհամակարգային ծառայությունների, այդ թվում՝ կլիմայական ռեսուրսներից օգտվելու դիմաց վճարումներից («ածխածնային բնավճար» (Carbon taxing)):

Տեղերում (գյուղերում ու քաղաքներում) նախագծերը ֆինանսավորելու նպատակով ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 19-ի N646-Ս որոշմամբ հանձնարարվեց ստեղծել քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ նաև քաղաքային ու գյուղական մակարդակներում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության վերը նշված երկու որոշումները, «Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպությունը դիմել էր ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակին ու, ստանալով հավանություն ու օժանդակություն, իրականացնում է Գլոբալ էկոլոգիական ֆոնդի ֆինանսավորմամբ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Փոքր դրամաշնորհների ծրագրի «ՀՀ ազգային

*մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների /ներդրումների (INDC) ֆինանսական մեխանիզմի ներդրում միջին և փոքր քաղաքային և գյուղական համայնքներում»* նախագիծը:

Նախագծի մասին համառոտ տեղեկությունը տեղակայված է հետևյալ կայքէջերում.  
<http://www.sgp.am/am/Projects?id=79> և <https://khazer.org/hy/hh-inds/>

Ներկայումս ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ Հայաստանի մի շարք գյուղերում փորձ է արվում ստեղծել Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ ու այդ գործիքակազմով իրականացնել շրջանառու ներդրումների նախագծեր:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ ներկայացնել կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների մոդելը համապատասխան տեխնոլոգիական և կազմակերպչական բաղադրիչներով, որպես կայուն, ապակենտրոնացված, գյուղի բնակչությանը պատկանող ու իրենց կողմից կառավարվող ֆինանսական մեխանիզմ: Ներկայացված ծրագիրը կնպաստի համայնքների ինքնակառավարման գիտելիքների և հմտությունների ձևավորմանը: Ծրագրով նախատեսվում է ընտրել պիլոտային գյուղական բնակավայրեր, համայնքեր կամ համայնքների միավորումներ, որոնք պատրաստ են նախաձեռնել ու հիմնել քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ:

Ծրագրի կարևոր բաղադրիչն է գյուղական բնակչության կարողությունների զարգացումը՝ հիմնադրամների գործունեության ինքնակառավարման, այդ թվում նրա գործունեության վերահսկման գործիքների հիմնման համար:

Ներկայացված ծրագրով զուգահեռաբար կմշակվեն օրենսդրության կատարելագործման առաջարկներ՝ ներդրումների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ու քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի սխեման Հայաստանի այլ բնակավայրերում լայնորեն ներդնելու համար:

Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների ստեղծման և գործարկման ամենակարևոր նախադրյալը այս նորարարական մեխանիզմի ընկալումն է որպես համայնքային ինքնակառավարման այլընտրանքային մոտեցում՝ միասնաբար կազմակերպված գործողությունների կատարման համար: Հիմնադրամի ստեղծման գործընթացը նախաձեռնելու համար մշակվել է ուղեցույց, անցկացվում են խորհրդատվություններ և հանդիպումներ նախաձեռնող խմբերի հետ, որոնք հետագայում պետք է դառնան հիմնադրամի հիմնադիրներ:

Ներկայումս երկու համայնքներում ստեղծվել են «Գլխմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ»: Իրականացման փուլում է փողոցային լուսավորության էներգախնայողության բարձրացման նախագիծը (Լճաշեն գյուղ): Այս նախագծում հիմնադրամը էներգախնայողության ծառայություն է մատուցում գյուղապետարանին՝ սովորական փողոցային լուսավորության լամպերը փոխարինելով լուսադիոդային լուսատուներով: Գյուղապետարանն այս ծառայության համար վճարը կատարում է խնայված միջոցների հաշվին՝ մինչև հիմնադրամի ներդրումների ամբողջական մարումը: Այս եղանակով վերադարձված միջոցները կներդրվեն համայնքի կողմից հաստատված այլ նախագծերում:

Համաձայնեցման փուլում է արևային ֆոտովոլտային համակարգի ներդրման և դեգրադացված գյուղատնտեսական հողերի վերականգնման համակցված ծրագիրը (Մեծ Պարնի գյուղ): Այս նախագծում արեգակնային ֆոտովոլտային կայանքի ներդրումը կնվազեցնի հիմնադրամի կողմից արտադրվող խոտածղոտային վառելիքային բրիկետների ինքնարժեքը, իսկ խնայողությունները ուղղվելու են դեգրադացված գյուղատնտեսական հողերի վերականգնմանը՝ բազմամյա անասնակեր խոտաբույսեր ցանելով: Այս երկու նախագծերի համատեղման շնորհիվ ներդրված միջոցների վերադարձման արագությունը զգալիորեն աճում է, ուստի նույն սխեմայով հետագա ներդրումների համար ստեղծվում է լայն ճակատ:

Նշված երկու գյուղերում նախաձեռնած ծրագրերում էլ նախատեսված է ներդրումների ամբողջությամբ վերադարձելիությունը գյուղացիներին պատկանող քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամին՝ 3-5 տարում: Այս միջոցները հասանելի դառնալուն պես կներդրվեն այդ գյուղական համայնքների հաջորդ նախագծերում:

Սույն ծրագրի շրջանակում կատարվել են 1-2 այցելություններ նշված գյուղերը, որոնց ընթացքում ամրապնդվել է համոզմունքը, որ քաղաքացիական շրջանառու ներդրումային մեխանիզմի սխեման աշխատունակ է ու հեռանկարային:

**Գործողությունների տեսանկյունից** հիմնականում ապահովվել է ZOOM համակարգով կազմակերպած հանդիպումների միջոցով, որին հրավիրվել են համայնքներում ձևավորված հիմնադրամների նախաձեռնողները, նախագահներն ու տնօրենները, ինչպես նաև (առավել հաճախ) գործարար հատվածից (Առևտրաարդյունաբերական պալատից) շահագրգռված ներկայացուցիչներ: Հանդիպումներ են տեղի ունեցել նաև գյուղական մի շարք համայնքներում:

Քանի որ Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի INDC-ով նախատեսված է «թափանցիկության» (transparency) ապահովման հատուկ գործողություն, որով առանձնահատուկ նշանակություն է տրվում «Չափման, հաշվետվայնության ու

*հավաստագրման»* ["Measuring, Reporting and Verification" (MRV)] ներքին (ազգային) համակարգի ստեղծմանը, փորձ է կատարվել Լճաշեն գյուղում ստեղծված «Լճաշեն համայնք» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ներքո ընթացող էներգախնայողության նախագծի շրջանակներում ձևավորել դպրոցի աշակերտներից ու գյուղի երիտասարդներից կազմված մոնիտորինգային խումբ:

Մեծ Պարնի գյուղում՝ «Մեծ Պարնի համայնք» կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստին ներկայացվել ու բացատրվել է ՉՀՀ-MRV-ի անհրաժեշտությունը, և որ Մեծ Պարնի հիմնադրամը, որն արդեն ունի կլիմայի փոփոխության մեղմման տարբեր նախագծերի իրականացման բարձր կարողություն, կարող է օրինակելի կազմակերպություն լինել չափողականության իրականացման ու ցուցադրման համար:

«Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» սխեման ներկայացվել է նաև ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի 3-րդ խմբին:

### **Երկու առավել կարևոր խոչընդոտներ**

1) «Համայնքների խոշորացման» գործընթացի հետևանքով շատ գյուղական համայնքներ զրկվեցին ոչ միայն ինքնակառավարման վարչական լծակներից, այլ նաև համայնքային սեփականության նկատմամբ իրավունքից, որի պատճառով անորոշություն առաջացավ տվյալ համայնքներում քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների ստեղծման ու գործունեության համար,

2) Հայաստանի INDC-ով նախատեսված համահայաստանյան «կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի» ստեղծումը, որը նախատեսված էր 2018թ.-ին, ՀՀ նոր կառավարության կողմից կասեցվեց: Դա զգալիորեն խաթարեց INDC-ով սահմանված ֆինանսական մեխանիզմի ներդրումը Հայաստանի համայնքներում:

### **Առաջարկների համառոտագիր**

- Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարությունը վերսկսել է «համայնքների խոշորացումը», կազմակերպել իրազեկման գործընթաց բնակավայրերում քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների ստեղծման համար:
- Գյուղական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների նախաձեռնությամբ ձևավորել միջգյուղական կլաստերներ՝ որպես 2-րդ մակարդակի ինքնակառավարման կառույցներ:

- Շարունակել INDC-ով նախատեսված՝ Համահայաստանյան կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի (կապիտալի) ստեղծման լոբբինգը:
- INDC-ի տեխնոլոգիական ու ֆինանսական մեխանիզմների կիրառմամբ ձևավորել «հանրային-մասնավոր համագործակցության» (PPP) հարթակ համայնքային հիմնադրամների ու մարզային առևտրաարդյունաբերական պալատների ներգրավմամբ:
- Նախաձեռնել ՀՀԳՀ-ով նախատեսված՝ ԵՄ-ի օժանդակության միջոցառումների մեկնարկը՝ գյուղական բնակավայրերում ԿՓՇԿ ու Փարիզյան համաձայնագրի ներքո կարողությունների զարգացման ու ամրապնդման համար:
- Համագործակցելով համապատասխան հիմնադրամների հոգաբարձուների խորհուրդների ու համայնքապետարանների հետ՝ օժանդակել համայնքային հիմնադրամների ձևավորմանն ու գործառնական կարողությունների ամրապնդմանը:
- Ձևավորել ներդրումային նախագծերի ընթացքի մշտադիտարկման ու ներդրումների վերադարձելիության մոնիտորինգի ու հսկողության հարթակ: Այդ նպատակով ստեղծել էլեկտրոնային պորտալ:
- Վերը նշված եւ այլ գործողություններն ուղեկցել ԶԼՄ-ներով իրազեկմամբ և այլ կազմակերպությունների (այդ թվում՝ հնարավոր դոնոր) ներգրավմամբ ու ռեսուրսների մոբիլիզացմամբ:

### **Հիմնական խնդիրներն ու լուծման ուղին**

Ինքնակազմակերպման վերը նշված մեխանիզմի ներդրման պրակտիկական ցույց է տվել, որ բնակչության մեծամասնությունը պատրաստ չէ ցուցաբերելու նախաձեռնություն և անվստահություն ունի ինքնակազմակերպման նորարարական մոտեցման նկատմամբ՝ հավաքական խնդիրները լուծելու համար: Մեկ այլ խնդիր է համայնքի կարիքները ձևավորելու և այդ կարիքները ներդրումային փաթեթների հասցնելու կարողության բացակայությունը:

Այս խնդիրները լուծելու համար նախաձեռնվել են քայլեր՝ միավորելու և համագործակցության միջավայր ստեղծելու քաղաքացիական հասարակության շահագրգիռ խմբերի՝ հիմնականում համայնքների և գործարար համայնքի միջև: Որպես համագործակցության սխեմա՝ ձեռնարկվել են քայլեր «հանրային-մասնավոր համագործընկերություն» կազմակերպելու ուղղությամբ, որում որպես պատվիրատու հանդես է գալիս ինքնակազմակերպված համայնքը՝ ի դեմս կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամների, որոնք հատկացնում են

իրենց ռեսուրսները, իսկ գործարար հատվածը հանդես է գալիս որպես կապալառու, որը համայնքի կողմից առաջադրած կարիքներն է բավարարելու իր ծառայություններով:

Հասարակության ինքնակազմակերպման նկարագրված մեխանիզմի համատարած ներդրման ամենակարևոր գրավականը բնակչության լայն շերտերի կողմից նկարագրված սխեմայի ընկալումն ու աջակցությունն է:

Սակայն մեծ խոչընդոտը, որը ուղեկցել է ողջ նախագծի ընթացքում՝ համաճարակն էր, որի ընթացքում հայտարարվեց «արտակարգ իրավիճակ», ինչը թույլ չէր տալիս բավարար չափով անմիջականորեն շփվել գյուղական բնակչության հետ եւ, իհարկե, պատերազմական իրավիճակն ու պատերազմը, որն ուղեկցվեց ռազմական դրության հայտարարված ռեժիմով:

## **Եզրակացություն**

Այս վերլուծությունը կարևոր էր հասկանալու համար, թե որտեղ են թաքնված խոչընդոտները, որպեսզի հաղթահարել դրանք:

Այդ նպատակով օգտակար էր անդրադառնալ Կիոտոյի արձանագրության մաքուր զարգացման մեխանիզմով նախաձեռնված, իրականացված, չիրականացված ու ձախողված նախագծերին, որոնց վերլուծությունը ցույց տվեց մի ընդհանուր խոչընդոտ, որը մեծ հաշվով կրում է համակարգային բնույթ ու ընդհանուր է բոլորի համար: Այդ խոչընդոտի հաղթահարման փորձ է կատարվում՝ նորարարական ինստիտուցիոնալ համակարգ ու գործիք ստեղծելու միջոցով:

Այլ կերպ ասած՝ թեև յուրաքանչյուր ՄԶՄ նախագիծ հանդիպել է իրեն համար յուրահատուկ խոչընդոտների, այնուամենայնիվ դրանց բոլորի ծագումը այսպես թե այնպես պայմանավորված է մի ընդհանուր համակարգային հանգամանքով: Դա այն է, որ այդ նախագծերի ազդեցությունը կրող իրական շահառուն, որը հանդիսանում է քաղաքացիական բնակչությունը, չի ընդգրկված գործընթացում: Մասնավոր հատվածը շահագրգռված է միայն նախագծի շահութաբերությամբ: Իրեն գրեթե չի հետաքրքրում ո՛չ բնապահպանական, ո՛չ առողջապահական, ո՛չ սոցիալական ազդեցությունը: Դա, մասնավորապես, վերաբերում է փոքր ՀԵԿ-երին, Լուսակերտի կենսազագի գործարանին: Երևանի քաղաքապետարանը ևս հետաքրքրված չէ էկոլոգիապես նախընտրելի ներդրմամբ ու սահմանափակվում է, պարզապես, աղբը «աչքից» հեռացնելով տեղափոխելով ու կուտակելով այն աղբավայրում: Նույնը վերաբերում է կեղտաջրերի հեռացմանը: Իրական շահառուն՝ բնակչությունը, հեռացված ու օտարված է այդ գործընթացներից: Հասարակական լսումներն ու քննարկումները



կրում են ձևական բնույթ ու մասնակցության պատրանք են ստեղծում, քանի որ չունեն գործնական հետևանքներ:

Հետաքրքրականն այն է, որ շահառու բնակչությունն էլ, կարծես, հետաքրքրված չէ գործընթացներում իր մասնակցությամբ: Դա վերաբերում է ինչպես մասնավոր հատվածի նախաձեռնություններին, այնպես էլ քաղաքապետարանների ու գյուղապետարանների նախաձեռնություններին ու գործողություններին:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարման ընտրակարգը հիմնված չէ ընտրողների իրական, գործնական շահագրգռվածության վրա: Ընտրությունը կատարելուց հետո բնակիչները զրկվում են գործընթացներին միջամտելու հնարավորությունից:

Հարցի հիմնարար լուծումը մենք տեսնում ենք բնակչությանը իրական ներդրումային իրավասություն ու լծակներ հատկացնելու մեջ, երբ բնակիչներն իրենք են տնօրինում հանրային միջոցները, հանդիսանում պատվիրատու, իսկ քաղաքապետարաններն ու գյուղապետարանները, ինչպես նաև մասնավոր հատվածը, դառնում են պատվեր կատարող: Դա հենց կլիմի իրական «հանրային մասնավոր համագործակցությունը»: Այսպիսի համագործակցության սխեմա նախատեսված է Հայաստանի INDC-ի ֆինանսական բաղադրիչով ու փորձնական կարգով իրականացվում է Հայաստանի մի քանի գյուղերում՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Փոքր դրամաշնորհների ծրագրի ներքո: Գյուղերում բնակիչների նախաձեռնությամբ հիմնվում են «Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներ» որի շահառուները գյուղի բոլոր բնակիչներն են՝ հավասար ներդրումային իրավունքներով: Իրենց առաջարկով ձևավորվում է հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը՝ հոգաբարձուների խորհուրդն ու ադմինիստրացիան: Սեփականությունը պատկանում է հիմնադրամին ու անօտարելի է:

Այս հարցում կարևոր դեր կարող է ունենալ Եվրամիությունը եւ, մեր կարծիքով, ԱլԳ ԲՀՖ-ն իր ազգային պլատֆորմներով լավագույն հարթակն է Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի դրույթների փորձարկման ու կատարման համար: Այդ հարթակում են ԿՓՇԿ-ին և Փարիզյան համաձայնագրին անդամակցող ԿՓՇԿ բոլոր կարգավիճակները կրող պետությունները («Annex 1», «Non Annex 1», «Annex 2», «Անցումային տնտեսությամբ Հավելված 1»):

Հայաստանը կարող է դառնալ փորձարկումը կազմակերպող երկիր, քանի որ ՀԸԳՀ-ով, փաստորեն, նախատեսված են այն մոտեցումները, որոնք համահունչ են Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի դրույթներին (տարբեր կարգավիճակ ունեցող երկրների միջև ընդհանուր, սակայն տարբերակված պարտավորություններ):

## ՀԱՎԵԼՎԱԾ

Քաղվածք Հայաստանի INDC-ից

(ՀՀ կառավարության 2015թ. Սեպտեմբերի 10-ի N42 արձանագրային որոշում)

6	<b>Ֆինանսներ</b>	<p>Համարժեք ֆինանսական աջակցություն ապահովելու նպատակով համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի ձևավորում: Այդ նպատակով կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության նախագծերի իրականացման նպատակային երկու բաղադրիչներից կազմված ֆինանսական մեխանիզմի ստեղծում.</p> <p>1) առաջինը՝ ներքին (տեղական), կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևաչափով, որը հաստատուն հիմունքներով համալրվում է բնավճարների միջոցներից, էկոհամակարգային ծառայությունների, այդ թվում՝ կլիմայական ռեսուրսներից օգտվելու դիմաց վճարումներից («ածխածնային բնավճար» (Carbon taxing)):</p> <p>2) երկրորդը՝ արտաքին (միջազգային) ֆինանսական մեխանիզմները, որոնց միջոցները տրամադրվում են հավելյալության սկզբունքով՝ Կանաչ կլիմայական հիմնադրամից, Կիոտոյի արձանագրության հարմարվողականության հիմնադրամից, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամից, բազմակողմ ու երկկողմ ֆինանսավորման և այլ աղբյուրներից:</p> <p>Ձևավորվող ֆինանսական մեխանիզմը՝</p> <p>ա. կստեղծի իրական ու գործուն հիմքեր հանրային-մասնավոր վստահելի համագործակցության (PPP) հիմնման ու զարգացման համար,</p> <p>բ. կապահովի ապագա սերունդների կողմից «կլիմայական ռեսուրսներից օգտվելու» իրավունքը:</p>
---	------------------	--